ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՀՐԱՎԵՐԻ ՊԱՐԶԱԲԱՆՄԱՆ ՄԱՍԻՆ

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի 2021 թվականի փետրվարի 3-ի թիվ 2 որոշմամբ և հրապարակվում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԾԱԾԿԱԳԻՐԸ «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-21/05»

Շրջակա միջավայրի նախարարության կարիքների համար «Տեխնիկայի և սարքավորումների» ձեռքբերման նպատակով կազմակերպված «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ստորև ներկայացնում է նույն ծածկագրով հրավերի վերաբերյալ 2021 թվականի փետրվարի 02-ին ժամը 18:47-ին ստացված հարցադրումը և դրանց վերաբերյալ 2021 թվականի փետրվարի 03-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1: Հարգելի գործընկեր

Չափաբաժին 3-ի համար պահանջվող տեխնիկական բնութագրերում նշված է. Առավելագույն վազքը՝ 1000 կմ: Հաշվի առնելով, որ նման տեխնիկան ներմուծվում է ինքնաերթ եղանակով, ընդունման պահին վազքը կազմում է 3000-3500 կմ: Խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք նման ցուցանիշն ընդունելի է և կդիտարկվի համարժեք թե ոչ:

Չափաբաժիններ 1, 2 և 3-ի համար պահանջվող տեխնիկական բնութագրերում նշված է. երաշխիքային և հետերաշխիքային սպասարկումը պատվիրատուի նշված հասցեում: Ցանկանում ենք տեղեկացնել, որ համաձայն ընկերության գործունեության և գործընկեր գործարանների պահանջի, երաշխիքային և հետերաշխիքային սպասարկումը կատարվում է գործարանների կողմից հավաստագրված սպասարկման կենտրոնում: Պատվիրատուին անհրաժեշտ հասցեում երաշխիքային և հետերաշխիքային սպասարկումը հնարավոր է, սակայն դա ենթադրում է լրացուցիչ վճար: Խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք նման գործընթացը ընդունելի է և կդիտարկվի համարժեք թե ոչ:

Չափաբաժիններ 1, 2 և 3-ի համար նշված է. մատակարարման ժամկետը Պայմանագրի կնքման օրվանից մինչև 60 օրացույցային օր: Ցանկանում ենք նշել, որ նշված տեխնիկան պատրաստվում է նվազագույնը 75 օրացույցային օրվա ընթացքում: Հաշվի առնելով տեղափոխման ժամանակահատվածը, մատակարարման ժամկետը կարող է լինել 90 օրացույցային օր: Խնդրում ենք պարզաբանել, արդյո՞ք նման ժամկետն ընդունելի է և կդիտարկվի համարժեք թե ոչ:

Պարզաբանում N 1: Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի 3-րդ մասը, ինչպես նաև «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-21/05» ծածկագրով հրավերի 1-ին մասի 3-րդ բաժնի 3.3 կետը՝ հանձնաժողովը գտնում է, որ հարցումը դուրս է հրավերի բովանդակության շրջանակից և «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-21/05» ծածկագրով Հրավերի Չափաբաժիններ 1, 2 և 3-ի գնման առարկաների տեխնիկական բնութագրերը նկարագրված են «Գնումների մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար՝ **Լ.Զոհրաբյանին**:

Հեռախոս՝ (011) 818 529:
Էլեկտրանային փոստ՝ gnumner.mnp@yandex.ru:

«ՇՄՆ-ԳՀ-ԱՊՁԲ-21/05» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով